ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հարգելի՛ գործընկեր,

«Գրադարան-ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և տեղեկատվական տեխնոլոգիաների» կենտրոնը 2019-2020 ուստարում կազմակերպում է **գիտահետազոտական գրագիտության խորհրդատվությունների**[1] **ակադեմիական խորհրդատուների բաց մրցույթ:**

Գիտահետազոտական գրագիտության խորհրդատվությունների անցկացման նպատակով յուրաքանչյուր ֆակուլտետի և առանձին «Ռազմական ամբիոնի» համար կընտրվի **մեկ** կամ **երկու** ակադեմիական խորհրդատու(ներ):

Գիտահետազոտական գրագիտության խորհրդատվությունների ակադեմիական խորհրդատուի նկատմամբ ներկայացվող պարտադիր և լրացուցիչ պահանջներն են՝

ա) պետք է ունենա բուհում առնվազն երեք տարվա դասավանդման փորձ կամ վերջին երեք տարվա ընթացքում առնվազն հինգ թրեյնինգի վարման փորձ,

բ) պետք է ունենա վերջին երկու տարում հրատարակված առնվազն երեք հոդված՝ վերաբերող իր գործունեության ոլորտին,

գ) պետք է պատրաստի գիտահետազոտական գրագիտության խորհրդատվությունների բովանդակության պատրաստման և վարման մեթոդների վերաբերյալ գրավոր նյութ՝ կրթական ծրագրերի և կուրսերի հաշվառմամբ (Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամը գնահատում է հինգբալանոց համակարգով, որտեղ մեկը՝ ամենացածր, իսկ հինգը ամենաբարձր միավորն է:):

դ) վերջին երեք տարում ցանկալի է ունենա մասնագիտական և/կամ ընդհանուր զարգացմանն ուղղված ակադեմիական վերապատրաստումներին

[1] *Բովանդակային կառուցվածքին կարող եք ծանոթանալ՝ այցելելով shsu.am --> Կենտրոններ --> Գրադարան-ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն --> «ՇՊՀ» հիմնադրամում ակադեմիական խորհրդատվությունների կառավարման աշխատակարգ --> Հավելված 2:*

մասնակցություն (Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամը գնահատում է երկու միավորով՝ անկախ վերապատրաստումների քանակից):

Մրցույթին մասնակցելու համար գիտահետազոտական գրագիտության խորհրդատվությունների ակադեմիական խորհրդատուից պահանջվում են հետևյալ փաստաթղթերը՝

ա) դիմում՝ Համալսարանի ռեկտորի անունով, անձնագրի և **սոցիալական քարտի պատճեններ,**

բ) ինքնակենսագրություն՝ 3x4 չափի լուսանկարով,

գ) տեղեկանք, որում արտացոլված կլինի հավակնորդի վերջին 3 տարվա աշխատանքային գործունեությունը,

դ) հաստատված գիտական և մեթոդական աշխատանքների ցուցակ,

ե) վերջին 2 տարում հրատարկված առնվազն 3 հոդվածների պատճեններ,

զ) գիտահետազոտական գրագիտության խորհրդատվությունների բովանդակության պատրաստման և վարման մեթոդների վերաբերյալ գրավոր նյութը (1 էջի սահմաններում),

է) մասնագիտական և/կամ ընդհանուր զարգացմանն ուղղված ակադեմիական վերապատրաստում(ներ)ի վկայական(ներ)ի պատճեն(ներ) (առկայության դեպքում),

ը) թրեյների կարգավիճակը հավաստող փաստաթղթ(եր)ի պատճեն(ներ)ը (առկայության դեպքում):

Պահանջվող փաստաթղթերը ներկայացնել կենտրոնի տնօրեն **Թ. Խաչատրյանին** կամ խորհրդատվությունների համակարգող **Շ. Գասպարյանին** մինչև սույն թվականի **հոկտեմբերի 29-ը** ներառյալ:

Մրցույթն անցկացվելու է «Գրադարան-ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և տեղեկատվական տեխնոլոգիաների» կենտրոնում սույն թվականի **հոկտեմբերի 30-ին՝ ժամը 12^{00}:**

Թերեզա Խաչատրյան

Բջջ. հեռ.՝ +374 93 248 119

Էլ. փոստի հասցե՝ Tereza_Khachatryan@shsu.am

Շուշան Գասպարյան

Բջջ. հեռ.՝ +374 94 496 510

Էլ. փոստի հասցե՝ shushan_gasparyan@shsu.am

Հավելված 1

ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ

ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

№	Թեմա
I հանդիպման բովանդակությունը	
1.	Ժամանակի կառավարումը
2.	Կազմակերպական փաստաթղթերի տեղաբաշխվածությունը
3.	Աշխատանքի թեման և գիտական ուսումնասիրության, հետազոտության նշանակությունը, էությունն ու փուլերը
4.	Աշխատանքի բովանդակությունը և հիմնական մասի գլուխների կառուցման տրամաբանությունը
5.	Գրականության ընտրությունը, ցանկի կազմումն ու հղումների կատարումը
II հանդիպման բովանդակությունը	
6.	Աշխատանքի ներածությունը (թեմայի արդիականությունը, աշխատանքի նպատակն ու խնդիրները, տեսական և/կամ կիրառական նշանակությունը, աշխատանքում օգտագործվող հիմնական գիտական, հետազոտական մեթոդները)
7.	Աշխատանքի հիմնական հասկացությունների ճշգրտումն ու մեկնաբանումը
8.	Աշխատանքի հիպոթեզ(ներ)ի նկարագրումը
9.	Աշխատանքի եզրակացությունը
10.	Աշխատանքի բանավոր ներկայացման կանոնները
Ընդհանուր տևողությունը՝ 160 րոպե	